ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» օգոստոսի 2024թ. N ՄՈ/415-Ա

ք. Արմավիր

«ԳԵՂԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2093-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակրթական ծրագրերով բնականոն ուսուցման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2093-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 87-րդ կետով ներառված «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքների ավարտը «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 1-12-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերով բնականոն ուսուցման երկու հերթով կազմակերպումն իրականացնել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի 1-ին փողոցի 2 հասցեում գտնվող վարչական շենքում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությանը և ֆինանսական վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, վարչության պետի պարտականությունները կատարող՝ Խ. Սարուխանյան և Վ. Մկրտչյան)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշման աշխատանքներին մասնակից դարձնել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Կ. Հարությունյանին, «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Համբարձումյանին, «Ծիածանի միջնակարգ դպրոց» և «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին (համաձայնությամբ):
4. «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Համբարձումյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 21-րդ կետով սահմանված ուղևորափոխադրման ծառայության ձեռք բերումը՝ պայմանով, որ այդ ծառայությունից պետք է պարտադիր կարգով օգտվեն շահառուներ հանդիսացող «Գեղակերտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական աշխատողները և սովորողները:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Ա. Խաչատրյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-08-08 10:13:20 GMT...
Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ